

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ

### ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

#### ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժնի նախաձեռնությամբ՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 02.04.2019թ. հ. 284-Ա կարգադրությունը, ինչպես նաև ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 52-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածով:

#### ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայեցակարգում շարադրվում են Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները, առաջնահերթություններն ու հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկները:

Հայեցակարգը սահմանում է միջնաժամկետ հատվածում քաղաքում զբոսաշրջության զարգացման նպատակները, խնդիրները, մոդելները, սկզբունքները, առաջնահերթությունները և մեխանիզմները:

Երևան քաղաքում զբոսաշրջության զարգացման հայեցակարգը գնահատում է զբոսաշրջային սեզմենտի զարգացման միտումները և խնդիրները, սահմանում է զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները, հաշվի է առնում զբոսաշրջային արդյունաբերության զարգացման արդյունավետությունը:

Հայեցակարգը համապարփակ (բազային) փաստաթուղթ է, որի հիման վրա մշակվելու է Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն,

թիրախային ծրագրեր եւ քաղաքում զբոսաշրջության զարգացման ծրագրային նախագծեր:

Հայեցակարգը բխում է նրանից, որ հենց քաղաքն է զբոսաշրջիկների համար գրավիչ կենտրոն, այլ ոչ թե առանձին զբոսաշրջային օբյեկտները, քանի որ թանգարանները, և այլ ցուցադրության օբյեկտները առանձին այլևս խարիսխ չեն, որոնք կարող են զբոսաշրջային հոսքեր գրավել:

Հայեցակարգի շրջանակներում կարող է ծագել Երևան քաղաքի տուրիզմի զարգացմանն ուղղված իրավական ակտերի, ինչպես նաև մի շարք ծրագրային փաստաթղթերի ընդունման անհրաժեշտություն:

#### **ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

2019 թվականից մինչև 2023 թվականներն ընկած ժամանակահատված:

#### **ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սույն հայեցակարգի նպատակն է՝

- բնութագրել և գնահատել Երևան քաղաքի զբոսաշրջային կարողությունները,
- զբոսաշրջության զարգացման միտումները և հեռանկարները,
- սահմանել զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները,
- ստեղծել գաղափարական մոտեցումների ընդհանուր հիմք Երևան քաղաքի զբոսաշրջության ոլորտի զարգացման համար որոշումներ կայացնող կողմերի (տեղական, ազգային, միջազգային) գործողություններն ուղղորդելու նպատակով.

- հիմք ընդունելով Հայեցակարգը առաջարկել ռազմավարություն, որին հետևելով հնարավոր կլինի ուղղորդել, ներառել և համատեղել քաղաքային զբոսաշրջության զարգացմանն ուղղված հնարավորություններն ու ջանքերը:

Մույն Հայեցակարգը հիմք է հանդիսանալու համալիր միջոցառումների մշակման համար՝ ուղղված քաղաքային զբոսաշրջության զարգացմանը, ինչը հնարավոր է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, զբոսաշրջային կազմակերպությունների, շահագրգիռ անհատների և կազմակերպությունների համախմբված գործողությունների արդյունքում:

Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման նպատակների իրականացմանը կնպաստեն հետևյալ քայլերը.

1. զբոսաշրջության ոլորտում որոշումների կայացման արդյունավետության բարձրացումը,
2. Երևան քաղաքի տարածաշրջանային, միջազգային և տեղական զբոսաշրջային նկարագրի բարձրացումը,
3. զբոսաշրջային մշակույթի զարգացման խթանումը,
4. նորարարական գաղափարների ստեղծման և զարգացման խթանումը,
5. քաղաքային տուրիզմի կադրերի պատրաստման միասնական համակարգի ստեղծումը:

Քաղաքային զբոսաշրջության զարգացման առաջնային հիմնախնդիրներն են.

- Երևանի զբոսաշրջային նկարագրի Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայություն,
- Երևանի զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերի վերաբերյալ տեղեկատվության սակավություն,
- զբոսաշրջիկների նախասիրությունների ուսումնասիրության և դրանց համապատասխան համակարգված միջոցառումների բացակայություն,
- սպասարկման ոլորտում ներգրավված մարդկային ներուժի շարունակական վերապատրաստման անհրաժեշտություն,

- զբոսաշրջության բնագավառում պետություն-մասնավոր հատվածի ակտիվ համակագործակցության ոչ բավարար մակարդակ,
- զբոսաշրջային ենթակառուցվածքների թերի զարգացվածություն,
- հանգստի և ռեկրեացիոն գոտիների ոչ պատշաճ մակարդակ,
- իրավական նորմերի ապահովում, համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծմամբ, որոնց շրջանակներում պարտադիր կլինեն զբոսաշրջային և ուղևորափոխադրող ծառայություններ մատուցող ընկերությունների հավատարմագրումը:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Այսօր զբոսաշրջությունը համարվում է քաղաքակրթության զարգացման ցուցանիշ, շրջակա իրականության ընկալման մեթոդ, մշակութային մակարդակի բարձրացման և մարդու առողջության վերականգնման միջոց:

«Զբոսաշրջություն» հասկացության վերլուծությունը թույլ է տալիս հանգել նրան, որ ներկայումս գոյություն չունի նրա միանշանակ, համընդհանուր ճանաչում ունեցող սահմանումը: «Զբոսաշրջություն» հասկացության գոյություն ունեցող բնորոշումները կարելի է միավորել երկու խմբում: Առաջին խմբի մեջ մտնում են այն բնորոշումները, որոնք կրում են նեղ մասնագիտական բնույթ, վերաբերում են զբոսաշրջության առանձին տնտեսական, իրավական, սոցիալական բաղադրիչներին և հանդես են գալիս որպես միջոց կոնկրետ խնդիրների լուծման համար (օրինակ՝ վիճակագրական հետազոտությունների համար): Երկրորդ խմբի մեջ ներառվել են այն սահմանումները, որոնք ընդգրկում են հասկացությունն ամբողջությամբ, բացահայտում են զբոսաշրջության ներքին բովանդակությունը, արտահայտում են հարաբերությունների և հատկանիշների բազմազանության միասնությունը և թույլ են տալիս տարբերել այն մյուս ոլորտներից:

Զբոսաշրջությունը հանդիսանում է երկրի բարեկեցությունը բարձրացնող կարևոր գործոն: Այն կարելի է դիտարկել որպես համակարգ, որն առաջարկում է

բոլոր հնարավորությունները ծանոթանալու տվյալ երկրի բնակչությանը, մշակույթին, պատմությանը, սովորույթներին, հոգևոր և կրոնական արժեքներին:

Ներգնա միջազգային զբոսաշրջությունը հյուրընկալող հասարակության սոցիալական կառուցվածքում առաջացնում է փոփոխություններ, քանի որ զբոսաշրջության զարգացումը ոչ միայն փոխում է սոցիալական շերտերի դիրքերը հասարակական աստիճանակարգում, այլ նաև նպաստում է մի նոր սոցիալական խմբի (զբոսաշրջիկների շերտի) ձևավորմանը, որն իր կազմով բավականին փոփոխական և դինամիկ է:

Ժամանակակից զբոսաշրջությունը համարվում է համաշխարհային տնտեսության արագ և դինամիկ զարգացող ճյուղերից մեկը, որին ներկայում բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 10,4%-ը, իսկ տարեկան ՀՆԱ-ում մասնաբաժնի ավելացումը միջինում տատանվում է 4%-ի սահմաններում: Զբոսաշրջության ոլորտում համաշխարհային մասշտաբով աշխատում է շուրջ 313 մլն մարդ կամ աշխարհում յուրաքանչյուր 10 աշխատակցից մեկը: Միջազգային զբոսաշրջային ժամանումները (գիշերակացով այցելությունները) ամբողջ աշխարհում 2018 թվականին աճել են՝ 6%-ով, մինչև 1.4մլրդ մարդ<sup>1</sup>: Հաշվի առնելով վերջին տարիներին միջազգային ժամանումների ուշագրավ աճը՝ 2010 թվականի UNWTO-ի երկարաժամկետ կանխատեսումներով նախատեսվում էր, որ զբոսաշրջային այցելությունների թիվը կհասի 1.4 միլիարդը միայն 2020 թվականին, սակայն 2018 թվականի աննախադեպ զբոսաշրջային հոսքը այս թիվն ապահովեց դեռևս երկու տարի շուտ:

Զբոսաշրջային հոսքերի աճի հետ մեկտեղ ավելանում են նաև զբոսաշրջությունից ստացվող դրամական հոսքերը: Համաձայն Euromonitor International-ի հետազոտական տվյալների՝ զբոսաշրջության և ճանապարհորդության արդյունաբերությունը շարունակում է սրընթաց զարգանալ և առաջ անցնել համաշխարհային էկոնոմիկայից:

2018 թվականին միջազգային զբոսաշրջության դրամական հոսքերը ավելացել են 4,1 %-ով, այն դեպքում, որ ՀՆԱ-ի աճն ամբողջ աշխարհում կազմել է ընդամենը

<sup>1</sup> Tourism Statistics UNWTO <https://www.e-unwto.org/toc/unwtotfb/current>

3.5%: Արդեն վեցերորդ տարին շարունակ զբոսաշրջության և ճանապարհորդության արդյունաբերությունը գերազանցում է համաշխարհային էկոնոմիկան, ցուցաբերելով նաև մարդկանց ձգտումը շարունակել ճանապարհորդել և բացահայտել իրենց համար նոր վայրեր՝ հաշվի չառնելով տնտեսական և քաղաքական մարտահրավերներն ամբողջ աշխարհում:

Զբոսաշրջության ազդեցության գնահատման ամփոփային աղյուսակ:

Գնահատումներ և կանխատեսումներ<sup>2</sup>:

| ԱՇԽԱՐՀ                                 | 2017<br>\$ ՄԼՐԴ | 2017<br>% | 2018<br>ԱՃ | \$ ՄԼՐԴ  | 2028<br>% | ԱՃ  |
|----------------------------------------|-----------------|-----------|------------|----------|-----------|-----|
| Ուղղակի ներդրումը ՀՆԱ-ում              | 2,570.1         | 3.2       | 4.0        | 3,890.0  | 3.6       | 3.8 |
| Ընդհանուր ներդրումը ՀՆԱ-ում            | 8,272.3         | 10.4      | 4.0        | 12,450.1 | 11.7      | 3.8 |
| Ուղղակի ներդրումը զբաղվածության մեջ    | 118,454         | 3.8       | 2.4        | 150,139  | 4.2       | 2.2 |
| Ընդհանուր ներդրումը զբաղվածության մեջ  | 313,221         | 9.9       | 3.0        | 413,556  | 11.6      | 2.5 |
| Ներքին զբոսաշրջության ծախսումներ       | 3,970.5         | 5.0       | 4.1        | 6,051.5  | 5.8       | 3.9 |
| Հանգստի նպատակով կատարվող ծախսումներ   | 4,233.3         | 2.5       | 4.1        | 6,605.3  | 2.8       | 4.1 |
| Գործարար նպատակով կատարվող ծախսումների | 1,230.6         | 0.7       | 3.8        | 1,756.1  | 0.8       | 3.2 |
| Կապիտալ ներդրումներ                    | 882.4           | 4.5       | 4.8        | 1,408.3  | 5.1       | 4.3 |

Զբոսաշրջությունը մեծ ազդեցություն ունի տնտեսության և կարևորագույն սոցիալական կատեգորիաներից մեկի՝ բնակչության կյանքի որակի վրա: Կյանքի որակի հիմնական բնութագրիչներ են հանդիսանում՝ բնակչության եկամուտները, նրա սոցիալական ապահովությունը, կենսապայմանները, ազատ ժամանակի ռաջիոնալ օգտագործումը և այլն: Զբոսաշրջությունը նշանակալի ազդեցություն է

<sup>2</sup> Travel & Tourism Global Economic Impact 2018  
<https://www.wttc.org/-/media/files/reports/economic-impact-research/regions-2018/world2018>

ունենում այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են զբաղվածությունը, աշխատանքի վարձատրությունը, հասարակական առողջությունը և մշակույթը՝ բարելավելով բնակչության կյանքի որակի բազային ինդիկատորները:

Համաշխարհային տնտեսական զարգացման մեջ զբոսաշրջության ոլորտին ներկայումս բաժին է ընկնում ծառայությունների համաշխարհային շուկայի 38%, համախառն ազգային արդյունքի 12%-ը, յուրաքանչյուր 15-րդ աշխատատեղը, համախառն ներդրումների 8%-ը, համաշխարհային սպառողական ծախսերի 14%-ը և այլն: Զբոսաշրջության զարգացումը խթանում է տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացմանը, ինչպիսիքն են՝ տրանսպորտը, կապը, առևտուրը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, սպառման ապրանքների արտադրությունը և հանդիսանում է տնտեսության վերակառուցման ամենահեռանկարային ուղղությունները մեկը:

Արդեն շուրջ մեկ տասնամյակ է զբոսաշրջությունը համարվում է ՀՀ տնտեսական զարգացման գերակա ուղղություններից մեկը, որին բաժին է ընկնում ՀՀ ՀՆԱ շուրջ 4,4%-ը (477,7 մլն ԱՄՆ դոլար՝ 2017թ. ), իսկ 2018-2028 թթ համար կանխատեսվում է տարեկան 4,2% աճ, 2028 թ. 8,5 % (784,3 մլն ԱՄՆ դոլար) ՀՆԱ մասնաբաժնով: Ներգնա զբոսաշրջությունը Հայաստանի արտահանման երկրորդ խոշորագույն ոլորտն է հանքահումքային արտադրանքի և մետաղներից հետո, որն ապահովում է ծառայությունների արտահանման կեսից ավելին<sup>3</sup>:

Զբոսաշրջությունը ՀՀ Կառավարությունը հռչակել է որպես տնտեսության զարգացման գերակա ոլորտներից մեկը, քանի որ այն կարող է հանդիսանալ հզոր խթան երկրի տնտեսության դիվերսիֆիկացիայի և զարգացման տեսանկյունից, ինչպես նաև Հայաստանի ճանաչելիության բարձրացման, թույլ զարգացած հատվածներում եկամուտների աղբյուրների ձևավորման և աշխատատեղերի ստեղծման գործընթացներում:

Զբոսաշրջության ոլորտը ՀՀում ապահովում է 44 500 աշխատատեղ (2017թ. )՝ 2018-2028 թթ համար տարեկան 1,4% աճի կանխատեսմամբ, իսկ 2028 թ.՝ 52 000 աշխատատեղի ապահովմամբ: 2017 թ. այցելուների կողմից ապահովվող արտահանման բաժինը կազմել է ՀՀ ընդհանուր արտահանման ծավալի 29,2%-ը

<sup>3</sup> ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր  
<http://www.gov.am/files/docs/1322.pdf>

(1,092.4 մլն ԱՄՆ դոլար), որը 2018-2028 թթ. համար կանխատեսվում է 3,2 % տարեկան աճ ծավալով՝ 2028 թ. 27,5 % մասնաբաժնով (1,754.5 մլն ԱՄՆ դոլար):

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության<sup>4</sup> հրապարակած տվյալների համաձայն՝ 2019 թվականի հունվար-մարտ ամիսներին ՀՀ այցելած միջազգային զբոսաշրջիկների թիվն աճել է 5.2%-ով, եթե 2018 թվականի առաջին երեք ամսում ՀՀ է այցելել 346,458 զբոսաշրջիկ, ապա ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում այդ թիվը կազմել է 364,489: 2018թ.-ին Հայաստան է ժամանել 1,651,782 զբոսաշրջիկ, ինչը 2017թ. համանման ցուցանիշը գերազանցում է 10.5%-ով կամ 157,003 զբոսաշրջիկով:

2018թ. սեպտեմբերին Bloombeerrg-ը Հայաստանը ներառել է Եվրոպայի ամենաարագ աճող զբոսաշրջային ուղղությունների տասնյակում (110-րդ հորիզոնականում)<sup>5</sup>: Նշվել է, որ զբոսաշրջիկները կարող են այցելել հմայիչ մայրաքաղաք Երևան, ծանոթանալ տեղական ավանդույթներին՝ այցելել կոնյակի գործարաններ, գորգագործներին, լսել հոգևոր երգեր հին վանքերում և սովորել լավաշ թխել:

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների զգալի մասը հայկական արմատներ ունեն: Զբոսաշրջիկների ամենամեծ հոսքը դեպի Հայաստան լինում է Ռուսաստանից, Իրանից և ԱՄՆ-ից: Քիչ չեն զբոսաշրջիկները՝ Գերմանիայից, Ֆրանսիայից և Իտալիայից: Առաջին տասնյակում են նաև Վրաստանը, Մեծ Բրիտանիան, Ուկրաինան և Կանադան: Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ մեկ զբոսաշրջիկը Հայաստանում անց է կացնում միջինը 17 օր՝ ծախսելով շուրջ 770 ԱՄՆ դոլար (370 հազար դրամ): Զբոսաշրջության տեսանկյունից Հայաստան այցելելու առավել գրավիչ ասպեկտներն են՝ մշակութային ժառանգությունը, ծառայությունների որակը, հյուրընկալությունը, սնունդը և բնությունը<sup>6</sup>:

<sup>4</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեի [2019 թվականի առաջին եռամսյակի տվյալներ](https://www.armstat.am/am/)  
<https://www.armstat.am/am/>

<sup>5</sup> <https://asue.am/am/amberd/publications/analytics/tourism-trends-world-what-future-tourists?fbclid=IwAR1sAcjTmMPALXsoRI8vQZSXZYuhrOQHOSfE0oYX1kmOhUKAe1OuKK693XQ>

<sup>6</sup> <https://armenpress.am/arm/news/942896.html>

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ**

Քաղաքային զբոսաշրջությունը կարևորվում է նրանով, որ այն ունի մի շարք գրավչություններ, ինչը հատուկ չէ գյուղական շրջաններին կամ բնական միջավայրերին: Քաղաքային զբոսաշրջության զարգացման խթանիչներն են՝ քաղաքային միջավայրը, ճարտարապետությունը, դիզայնը, հուշարձանները, թանգարանները, հյուրանոցային տնտեսությունը, զարգացած ենթակառուցվածքները, հանգստի և ժամանցի վայրերը:

Քաղաքներն այն գրավչություններն են, որոնց վրա տարիներ շարունակ կատարվել են տարատեսակ տեխնիկական ու մշակութային ներդրումներ, որոնք էլ քաղաքներին տալիս են տնտեսական և զբոսաշրջային արժեք: Քաղաքները ճկուն զբոսաշրջության շնորհիվ ունեն նոր գրավչություններ, որոնց հետ ոչ մի գյուղական շրջան կամ բնական միջավայր չի կարող մրցել: Քաղաքաշինության, ճարտարապետության, մշակույթի, քաղաքային տնտեսության և կենցաղի, ազգային կենցաղավարության ավանդույթների ու ժամանակի պահանջների տրամաբանական սինթեզը՝ լանդշաֆտի բաղադրիչի լիարժեք ինտեգրմամբ, կարող է հանգեցնել անզուգական արդյունքների: Այն նաև հանդես է գալիս որպես քաղաքային տնտեսության գործունեությանը նպաստող ռեսուրս:

Քաղաքային զբոսաշրջության հումքը՝ տվյալ քաղաքի գրավչություններն են, իսկ 21-րդ դարում այդ գրավչությունները պետք է համեմված լինեն նաև գեղեցիկ փաթեթավորմամբ, ճիշտ մարքեթինգային մոտեցմամբ, միջազգային զբոսաշրջային շուկայում ընդունված չափորոշիչներին համահունչ:

Ըստ ՄԱԿ-ի Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության<sup>7</sup>, քաղաքային զբոսաշրջություն էգրույթը նկարագրում է զբոսաշրջային բազմազան ակտիվությունները, որտեղ քաղաքը հիմնական նպատակակետն է ու հետաքրքրական վայրը և տևողությունը սովորաբար կարճ է՝ 1-3 օր: Զբոսաշրջության այս ձևը համեմատաբար նոր է: Քաղաքները մշտապես եղել են բազմաթիվ զբոսաշրջությունների և ուղևորությունների հիմնական նպատակը,

<sup>7</sup>Global Report on City Tourism - World Tourism Organization UNWTO  
[http://cf.cdn.unwto.org/sites/all/files/pdf/am6\\_city\\_platma.pdf](http://cf.cdn.unwto.org/sites/all/files/pdf/am6_city_platma.pdf)

այնուամենայնիվ 1950-ականներից ի վեր այն սկսեց ավելի զարգանալ: Քաղաքային զբոսաշրջության զարգացումը սերտորեն կապված է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ:

Քաղաքային զբոսաշրջությունը մեծ վերելք է ապրում ամբողջ աշխարհում, և Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ: Քաղաքային զբոսաշրջությունը ներառում է հետևյալ տարատեսակներն ու ուղղությունները՝

- Մշակութային զբոսաշրջություն,
- Հնագիտական զբոսաշրջություն,
- Իրադարձային զբոսաշրջություն,
- Բիզնես/MICE (հանդիպումներ, նախաձեռնություններ, կոնֆերանսներ և ցուցահանդեսներ) զբոսաշրջություն,
- Սպորտային զբոսաշրջություն,
- Արկածային և էքստրեմալ զբոսաշրջություն,
- Ժամանցային զբոսաշրջություն,
- Գաստրո զբոսաշրջություն և էնո զբոսաշրջություն,
- Առողջապահական զբոսաշրջություն:

Երևանում քաղաքային զբոսաշրջություն տուրիզմի բոլոր տարատեսակներն ու ուղղությունները դրսևորված են և զարգացման մեծ ներուժ ու հնարավորություն ունեն: Երևանը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի, քանի որ այն հանդիսանում է պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն, համայն հայության մայրաքաղաք, երկրի մարդկային ռեսուրսների հիմնական կրող: 2800-ամյա Երևանը Հայաստանի ամենամեծ քաղաքն է՝ երկրի տնտեսական, մշակութային կենտրոնը: Հիմնադրվել է մ.թ.ա. 782 թ.՝ Հռոմի հիմնադրումից 29 տարի առաջ: Երևանում զբոսաշրջիկները կարող են հիանալ հին ու նոր ճարտարապետությամբ, այցելել թանգարաններ, թատրոններ, եկեղեցիներ, այգիներ և այլն: Այցելության լավագույն վայրերից են՝ Մատենադարանը (որտեղ պահվում է շուրջ 17000 ձեռագիր), Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Էրեբունի ամրոցը և Էրեբունի պատմահնագիտական արգելոց-

թանգարանը, Երևանի պատմության թանգարանը, Հայաստանի պատմության թանգարանը, Հայաստանի ազգային պատկերասրահը, Հաղթանակի զբոսայգին և Մայր Հայաստան հուշահամալիրը, Կասկադ համալիրը և Գաֆէսճեան արվեստի կենտրոնը, Երևանի կոնյակի գործարանը, Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Երևանի կենդանաբանական այգին, Երևանի բուսաբանական այգին, Հանրապետության հրապարակը՝ երգող շատրվաններով, Վերնիսաժի շուկան, նորաբաց այգիներն ու պուրակները, Հյուսիսային պողոտան, Ազատության հրապարակը և Կարապի լիճը, եկեղեցիները, և այլն<sup>8</sup>:

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է զբոսաշրջիկների առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը, որտեղ զբոսաշրջիկների մեծ մասն այցելում է մայիս-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Զբոսաշրջային ծառայությունների արագ աճող պահանջարկը վերջին տարիներին հանգեցրեց հյուրանոցների թվի աճին: 2018թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ Երևանում գործում է 300 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 15,5% գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Մայրաքաղաքի հյուրանոցային տնտեսության օբյեկտները ապահովում են 5620 հյուրանոցային սենյակ և 9580 ննջատեղ<sup>9</sup>:

2018թ. Երևանի հյուրանոցային տնտեսության ոլորտն ավելացել է 1000 հյուրանոցային սենյակով: Շուկայում գործում են այնպիսի հյուրանոցային բրենդեր, ինչպիսիք են՝ «Արմենիա Մարիոթ», «Հայաթ Փլեյս», «Բեստ Վեստերն Կոնգրես», «Ռադիսոն Բյու», «Դաբլ Թրի Բայ Հիլտոն», «Դը Ալեքսանդր», իսկ 2019թ. բացվել են «Հոլիդեյ Ինն Էքսպրես» և «Ramada by Wyndham Hotel & Suites» հյուրանոցները:

Ներկայացնելով Երևան քաղաքի ռեսուրսային ներուժը, կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալ Երևան քաղաքի պատմամշակութային

<sup>8</sup> <https://asue.am/am/amberd/publication/analytics/brand-of-yerevan-for-attracting-tourists-and-developing-city-tourism?fbclid=IwAR1SSm9f4FEWbt1RVbNxCi2mHTaMCFGawc6GN10e7axu8xYHxssMmhg1iw>

<sup>9</sup> Ըստ Տուրիզմի բաժնի 2017թ. գույքագրման աշխատանքների

Ժառանգությանը, տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրօրինակ խոհանոցին և այլն:

Քաղաքային զբոսաշրջության շրջանակներում կարևորվում են նաև տվյալ քաղաքում միջոցառումների անցկացումը: Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանը որդեգրել է մայրաքաղաքում փառատոնային զբոսաշրջությունը զարգացնելու քաղաքականությունը, ինչի արդյունքում զբոսաշրջիկների կայուն աճ է գրանցվում: Ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան», «Երևան Տարագֆեստ» և «Երևանի Գարեջրի» փառատոների անցկացումը:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում մասնավոր ներդրողների ներգրավելու նպատակով մշակվել են ներդրումային փաթեթառաջարկներ: Այդ փաթեթները ներառում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Շենգավիթ հնավայրի, Կարմիր կլուբ հնավայրի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման, «Հաղթանակ» զբոսայգու, Հրազդանի կիրճի տարածքների վերակառուցման ու արդիականացման և այլ ծրագրեր<sup>10</sup>:

Երևանը՝ որպես առաջատար զբոսաշրջային քաղաք, վերջին տարիներին պարբերաբար հայտնվում է ինչպես ռուսական, այնպես էլ միջազգային պարբերականների և կայքերի հոդվածներում<sup>11</sup>:

Միաժամանակ հարկ է նշել, որ դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Երևանը պատշաճ կերպով չի ներկայացվում արտերկրում որպես 2800 ամյա պատմություն և մշակույթ, համեղ խոհանոց և հյուրընկալ ժողովուրդ ունեցող քաղաք: Զբոսաշրջային ենթակառուցվածքները թերզարգացած են, ծառայությունների մակարդակը շատ բարձր չէ, քիչ են զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները: Երևանում զբոսաշրջության զարգացման համար, հաշվի առնելով Երևանի պատմամշակութային, կրոնական, գաստրոնոմիական, ժամանցային, գործարար զբոսաշրջային հնարավորությունները, պետք է մշակել Երևանի զբոսաշրջային բրենդ կամ կերպար և ակտիվ մարքեթինգային գործունեության միջոցով ներգրավել

<sup>10</sup> Երևան զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագիր

<sup>11</sup> <http://999stories.com/interesno/8-yavlenij-kotorye-mogut-udivit-turistov-v-erevane/>

միջազգային զբոսաշրջիկների, զարգացնել զբոսաշրջային ենթակառուցվածքները, բարելավել սպասարկման մակարդակը, զբոսաշրջային ծառայությունների գին-որակ ցուցանիշները, ավելացնել կանաչ տարածքները, զբոսաշրջային ժամանցի վայրերը<sup>12</sup>: Վերը նշված նպատակներին հասնելու համար, ստորև ներկայացվում են համապատասխան գործողությունների ծրագրեր:

#### **Գործողությունների ծրագրի մշակում**

Երևանի զբոսաշրջային նկարագրի պատշաճ ձևավորման, բարելավման, գրավչությունների զարգացման և զբոսաշրջության տեսանկյունից քաղաքի բարենպաստ ընկալման ուղղությամբ հիմնական ծրագրային խնդիրներն են՝

- Զբոսաշրջության հայեցակարգի հիման վրա երկարաժամկետ զարգացման ծրագրի մշակում:
- Երևանի զբոսաշրջային նկարագրի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:
- Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման «բրենդի»-ի մշակում:
- Երևանի պատմամշակութային հուշարձանների, հուշակոթողների և թանգարանների աղետների ռիսկի նվազեցման, ինչպես նաև աղետների դեպքում արվեստի գործերի անվտանգության ապահովման հայեցակարգի և գործողությունների ծրագրի մշակում:
- Երևան քաղաքի տեսարժան վայրեր այցելելու ավտոբուսային երթուղիների մշակում և ներդրում, համապատասխան տեղեկատվական ձայնագրություններով, էլեկտրոնային թարգմանության համար նախատեսված սարքավորումներով և էլեկտրոնային գիդերով:
- Երևան քաղաքի վարչական շրջաններում զբոսաշրջության համար համապատասխան միջավայրի ձևավորումը, որը նաև կնպաստի վարչական շրջանի սոցիալ-տնտեսական աշխուժության բարձրացմանը:
- Երևան քաղաքում օտարերկրյա և տեղական ներդրումների ներգրավումը, միջազգային համատեղ ծրագրերի իրականացմամբ:

<sup>12</sup> <https://asue.am/am/amberd/publication/analytics/brand-of-yerevan-for-attracting-tourists-and-developing-city-tourism?fbclid=IwAR1SSm9f4FEWbt1RVbNxCi2mHTaMCFGawc6GN10e7axu8xYHxssMmhg1iw>

- Երևանում զբոսաշրջության կայուն զարգացման և զբոսաշրջային արդյունքի որակի շարունակական ապահովման համար, երկրում և քաղաքում անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել ոլորտը սպասարկող ենթակառուցվածքների՝ միջպետական նշանակության ավտոմայրուղիներ, դեպի զբոսաշրջային գրավչության օբյեկտներ տանող ճանապարհներ, զբոսաշրջային երթուղիներ և դրանց ապահովում, մատչելի և բարձրակարգ հյուրանոցային և ռեստորանային տնտեսության օբյեկտներ, զբոսաշրջային տների ցանցի ձևավորում և զարգացումն դրանց ինտեգրում համաշխարհային համապատասխան ցանցերին:
- Քաղաքում առկա հնագիտական և պատմամշակութային հուշարձանները համապատասխան միջավայրի ձևավորման դեպքում կարող են մեծ ներուժ ներկայացնել քաղաքի կառուցվածքում զբոսաշրջային կենտրոնների զարգացման համար: Բնապատմական և զբոսաշրջային միջավայրի վերակառուցման, սպասարկման ոլորտի արդիականացման պարագայում, տարածքը կարող է վերածվել ազդեցիկ զբոսաշրջային գոտու: Արդյունքում նման ծրագրերը կարող են մասամբ բեռնաթափել քաղաքի գերծանրաբեռնված կենտրոնական հատվածները և սպասարկման հազեցվածության տեսանկյունից հավասարակշռել քաղաքի տարածքը:
- Փողոցների կառուցապատման հետաքրքիր և բարվոք վիճակը դրական ազդեցություն է ունենում թե՛ տեղաբնակների և թե՛ զբոսաշրջիկների համար: Այս առումով բավականին անելիքներ կան Երևանի փողոցների և շենքերի ճարտարապետական արտահայտչականության բարձրացման ուղղությամբ: Բարձր ճարտարապետական արժեք չներկայացնող կառույցները պետք է լինեն խնամված և մաքուր: Հարկավոր է առանձնակի ուշադրություն դարձնել ուղղաձիգ կանաչապատմանը, այն կնպաստի փողոցների համայնապատկերի և միջավայրի աշխուժացմանը:
- Քաղաքաշինական ներդրումային ծրագրերը ուղղորդել բացառապես քաղաքային կենսամիջավայրի բարեկեցության պայմանների և որակների բարձրացմանը՝ համապատասխանեցնելով «Կայուն քաղաքներ», «Կանաչ

Ճարտարապետություն», «Խելացի քաղաքներ», «Կանաչ քաղաքաշինություն» սկզբունքներին:

- Զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով օտար լեզուներով ուղեցույցների և էլեկտրոնային քարտեզների կազմում, համապատասխան փողոցների և զբոսաշրջային վայրերի նշաններով կահավորում, այդ թվում զբոսաշրջային ծառայություններ մատուցող ընկերությունների գովազդային վահանակների նույնառճ կահավորում:
- Զբոսաշրջության բնագավառում որակյալ հետազոտությունների իրականացում, մարքեթինգային քաղաքականության ակտիվացում, թիրախային շուկաների շարունակական ուսումնասիրություն յուրաքանչյուր շուկայի համար առանձին մարքեթինգային քաղաքականության մշակում և իրականացում՝ հիմնված տվյալ շուկայի առանձնահատկությունների վրա:
- Կարևորվում է նաև մուտքի վիզային ռեժիմների ազատականացմանը և օդային տրանսպորտի գների նվազեցմանն ուղղված հարցերի կարգավորումը: Օդային տրանսպորտի գների նվազեցմանն ուղղված հարցերի կարգավորման նպատակով առաջարկվում է ներդնել City break (քաղաքային ընդմիջում) համակարգը, որը ենթադրում է հանգստյան օրերին կարճատև ուղևորություններ դեպի քաղաքներ բավականին մատչելի ավիատոմսերով:

### **Ներդրումային ծրագրերի մշակում և իրականացում**

Քաղաքում առկա հնագիտական և պատմամշակութային հուշարձանները, այգիները, ռեկրացիոն վայրերը և պուրակները, փողոցները համապատասխան ձևավորման և արդիականացման պարագայում կարող են մեծ ներուժ ներկայացնել քաղաքի կառուցվածքում զբոսաշրջային կենտրոնների զարգացման համար: Ֆինանսական առումով ստորև բերված ենթակառուցվածքների համապատասխան վերակառուցումները կարող են հանդիսանալ նաև որպես ներդրումային ծրագրեր:

Պատմականորեն կառուցապատված գոտիներ.

Պատմականորեն կառուցապատված գոտիներ.

- Հանրապետության փողոցի և Տիգրան Մեծ պողոտայի հատված,
- Ձորագյուղ ազգագրական թաղամաս,

- Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան,
- Շենգավիթ և Կարմիր բլուր հնավայրեր
- Կոնդ թաղամաս,
- Ծիծեռնակաբերդ հնագիտական բնակատեղին և Մեծ Եղեռնի հուշահամալիրին հարող տարածքների բնապահպանական լանդշաֆտի գոտի,
- Հաղթանակ զբոսայգու և Ազատության պողոտային հարակից լանդշաֆտի պահպանման գոտի,
- Սյասնիկյան պողոտայի և Հին Նորքի պատմական բնակավայրի լանդշաֆտի պահպանման գոտի,
- Հրազդանի կիրճին հարող ռեկրեացիոնբնապատմական գոտի
- Կասյան և Հ. Հակոբյան փողոցների միջև ընկած զբոսապուրակ:

### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

Երևանի քաղաքի զբոսաշրջության զարգացման հայեցակարգով առաջարկվող լուծումների ֆինանսական գնահատականը հնարավոր կլինի տալ այդ լուծումների իրագործմանն ուղղվող ծրագրերի մշակման արդյունքներով: Ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ կարող են լինել պետական և համայնքների բյուջեները, մասնավոր հատվածի ներդրումները և նպատակային նվիրատվությունները, օրենքով չարգելված այլ աղբյուրները: Ֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ նաև զբոսաշրջային հարկի վերաբերյալ օրենդրական նախագծի ընդունումը: Հարկման այս տեսակը գանձվում է զբոսաշրջիկից ուղղակիորեն կամ հիմնականում հյուրանոցային տնտեսության օբյեկտների միջոցով: Նման հարկատեսակ գործում է եվրոպական մի շարք մայրաքաղաքներում:

### **ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով ամփոփելով կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունը, որ Երևան քաղաքում զբոսաշրջության զարգացման մեծ հնարավորություններ կան,

միառժամանակ առկա են մի շարք խնդիրներ: Այդ խնդիրների լուծման նպատակով ստորև ներկայացնում ենք հետևյալ առաջարկները.

1. Արտերկրում Երևանի նկատմամբ զբոսաշրջային գրավչության մեծացման նպատակով առաջարկվում է տարբեր քաղաքներում իրականացնել «Երևանի օրեր» խորագրով միջոցառումների շարք, փառատոններ, ցուցահանդեսներ որոնց ընթացքում կներկայացվեն Երևանի պատմական, մշակութային առանձնահատկությունները, հանգիստը Երևանում անցկացնելու առաջարկների առավելությունները:

2. Երևանի զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերի վերաբերյալ զբոսաշրջիկների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով առաջարկվում է նկարահանել այդ վայրերը և նրանց առանձնահատկությունները լավագույնս բնութագրող կարճ տեսանյութ-գովազդ և այն ներկայացնել առաջին հերթին տարբեր հյուրանոցներում, որտեղ դրանք ավելի հասանելի կլինեն զբոսաշրջիկների համար: Նույն նպատակով առաջարկվում է նաև ստեղծել յուրօրինակ հավելված, որը ևս հնարավորություն կտա ծանոթանալ Երևանի զբոսաշրջային քարտեզին, զբոսաշրջիկներին առաջարկվող հատուկ ծառայություններին, ինչպես նաև նրանց նախասիրություններին համապատասխանող միջոցառումներին:

3. Երևանի նկատմամբ զբոսաշրջիկների հետաքրքրությունը մեծացնելու նպատակով առաջարկվում է զբոսաշրջիկների ներհոսքի շրջանը հազեցնել նաև նրանց նախասիրություններին համապատասխանող միջոցառումների անցկացմամբ, օրինակ՝ մարզասերների համար հեծանվավազքի մրցույթներ, քայլարշավներ, հանրային վայրում նկարչություն կամ բաց երաժշտական երեկոներ: Սակայն, նմանատիպ միջոցառումներն ավելի արդյունավետ և նպատակաուղղված կազմակերպելու նպատակով առաջարկվում է ինչպես նախապես, այնպես էլ զուգահեռաբար կատարել ուսումնասիրություններ և անցկացնել սոցիալական հարցումներ զբոսաշրջիկների շրջանում՝ բացահայտելու նրանց նախասիրությունները, ինչպես նաև Երևանից ստացած տպավորությունները:

4. Երևան քաղաքի զբոսաշրջային զարգացման համար կարևոր գործոն է նաև սպասարկման ոլորտի ծառայությունների որակը, որի բարելավման նպատակով առաջարկվում է իրականացնել ծառայություն մատուցող կազմակերպությունների (էքսկուրսիոն, զբոսաշրջային, ուղևորափոխադրող ընկերությունների) անձնակազմի շարունակական վերապատրաստումներ, ինչպես նաև հավատարմագրերի տրամադրում և զբոսաշրջիկների անվտանգության համակարգի ստեղծում և ապահովում:

5. Զբոսաշրջության զարգացման գործընթացում առաջարկվում է ներգրավել նաև հանրությանը, այսինքն՝ հնարավորություն տալ հանրային ներկայացուցիչներին ներկայացնել զբոսաշրջային զարգացման նախագծեր/ստարտափեր:

6. Հանգստյան օրերի զբոսաշրջություն (weekend tourism), այսինքն՝ Երևանում առաջարկվող զբոսաշրջային ծառայությունները հարմարեցվեն նաև մարդկանց շաբաթվա ազատ օրերի հանգիստը կազմակերպելու համար:

7. Փորձառույթահենք զբոսաշրջություն (experience-based tourism), այսինքն՝ առաջարկվող զբոսաշրջային ծառայությունները լինեն ներառող, ակտիվ և զբոսաշրջիկները ներառվեն տեղական կյանքին՝ հատկապես ոչ նյութական մշակույթի տարրերի (խաղեր, արհեստներ, սովորույթներ, տոներ, խոհանոց և այլն) օգտագործման օգնությամբ:

#### ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան քաղաքում զբոսաշրջության զարգացումը մեծ ազդեցություն կարող է ունենալ մայրքաղաքի սոցիալ-տնտեսական կյանքի բարելավման վրա: